

լու, նրա քաղաքական շահերը ընդարձակելու մեծամիջն ջանքերը: Միհրներսեհ. Հաղարապետը, որ մեր պատմիչների ասելով նոյն պէս մի դաժան հրէց էր, պետական մի խելօք գործից էր, ահա զին ազգեցութեան տէր մարդ: Մեր հնեղինակը արաբացի հեղինակների հաղորդած տեղեկութիւններն է բերում Միհրներսեհի մասին և մենք տեսնում ենք որ դա, միշտ որ, մի փորձուած, խորագէտ պաշտօնեայ էր: Այժմ բոլորովին հասկանալի է դառնում որ հայերի ապատամբութիւնը հինգերորդ դարում ոչինչ արդիւնք չէր կարող տալ, նա միայն կը վիճէր մի հիանալի նահատակութիւն, գաղափարական մի ինքնազոհութիւն: Այդպէս էլ եղաւ Հայաստանը քարուքանդ եղաւ և այլ ևս չը կարողացաւ առաջուայ պէս ապրել:

Վերջացնելով մեր խօսքը Փօրթուգալ ֆաշա գեղեցիկ աշխատութեան մասին, մենք ամբողջ սրտից կը ցանկայինք որ մեր բոլոր պատմագիրները գտնէին այդ բարձրաստիճան, զարգացած և վերին աստիճանի բարեխիղճ աշխատաւոր հայի աման բացատրողներ և լուսաբանողներ:

4.

Ն Ո Ր Ս Տ Ա Ց Ո Ւ Ի Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

- 1) Իվան Տուրգենեվ, Արձակ բանաստեղծութիւններ, թարգմանութիւն Ալ. Շատուրեանի, Բագու, 1902 թ., զին է 2 կոպ.:
- 2) Բժ. Ա. Բուգուղիմ, Առողջ ու հիւանդ երեխայի ողին, Ա.-Պետերբուրգ, 1902 թ., զին է 20 կոպ.:
- 3) Յ. Պոտտո, Առաջին աշխատանքներ Կարագա մասնակի աշխատանքներ, 1902 թ., զին է 60 կոպ.:
- 4) Հաշիւ Սանկտ-Պետերբուրգի հայոց եկեղեցական գոյքերի կառավարութեան խորհրդի 1901 տարուան, Ա.-Պետերբուրգ, 1902 թ.:
- 5) Լէօ, Ստեփանոս Նաղարեան, Խ հատոր, 1902, երկու հատորի զին է 1 ռ. 50 կ.:
- 6) Լ. Մանուէլեան, Դէպի վեր, զրամատիկական պօէմա, Ա.-Պետերբուրգ, 1902 թ., զին է 10 կոպ.: